ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ
ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 15.07.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ՍՑ-ՆԳ-2021/166

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 21.06.2021թ. թիվ 26/26-1/10031-2021 գրությամբ «Վանյան և Հովսեփյան» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի (հետայսու նաև՝ Պատվիրատու) 14.06.2021թ. թիվ Ե/ՎՈՒ/1068-21 գրության հիման վրա, 21.06.2021թ. թիվ 26/26-1/10031-2021 գրությամբ նախաձեռնել է «Վանյան և Հովսեփյան» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>«Վանյան և Հովսեփյան» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Վանյան և Հովսեփյան» ՍՊԸ-ն Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալը.

««Վանյան և Հովսեփյան» ՍՊԸ-ն (ՀՎՀՀ 06944032, հասցե՝ ՀՀ, ք. +37498896575, էլ. փոստի հասցե՝ Վանաձոր, Ռուսթավի 7/2, հեռ. qristine.hovsepyan@yandex.ru) մասնակցել է «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի կողմից կազմակերպված շինարարական աշխատանքների ձեռքբերման ՀԱԱՀ-ԳՀԱՇՁԲ-21/69 ծածկագրով գնման ընթացակարգին:

Միաժամանակ հայտնում ենք, որ «Վանյան և Հովսեփյան» ՍՊԸ-ն նշված օրերին համակարգից ծանուցում չի ստացել, նշված էլ. փոստին ՀԱԱՀ-ի կողմից ուղարկված նամակ և/կամ հեռախոսազանգ ևս չի գրանցվել: «Վանյան և Հովսեփյան» ՍՊԸ-ի կողմից ծանուցվելու մասին հաստատող պատասխան չի ուղարկվել: Միայն 22.06.2021թ-ին ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից ուղարկված նամակից հետո ՍՊԸ-ի էլ: փոստի «spam» բաժնում գտանք «armeps» ավտոմատ ծանուցումների համակարգից եկած ծանուցումը:

«Վանյան և Հովսեփյան» ՍՊԸ-ն գործում է 2010թ-ից: Լոռու մարզում համագործակցել է բազմաթիվ պետական, համայնքային և մասնավոր կառույցների հետ: Գործունեության ամբողջ ընթացքում չի եղել որևէ դեպք ոչ պատշաճ աշխատանքի, կազմակերպությունը մարզում վայելում է շինարարական և էներգետիկ աշխատանքների իրականացման բարձր որակավորում ունեցող ընկերության համբավ: Սեփական աշխատանքի, օրենքի և պետական ընթացակարգերի նկատմամբ պատասխանատու մոտեցումը օգնել է, որպեսզի երբևէ ՍՊԸ-ն այսօրինակ խնդիրների առաջ չկանգնի: Սա առաջին նախադեպն է և, հույս ունենք, որ հնարավոր կլինի չկասեցնել «Վանյան և Հովսեփյան» ՍՊԸ-ի՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքը: Խնդրում ենք դիտարկել այն հանգամանքը, որ կազմակերպությունը չի խախտել պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած որևէ պարտավորություն, որը կհանգեցներ պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծման, չի եղել ընտրված մասնակից և չի հրաժարվել պայմանագիր կնքելուց, հայտերը բացելուց հետո չի հրաժարվել գնման գործընթացին հետագա մասնակցությունից: Տեղի ունեցածը, ցավոք, տեխնիկական է, և քանի որ, կազմակերպությունն էլ գնային առաջարկի

մեծությամբ զբաղեցրել էր 24 մասնակիցների մեջ 16-րդ տեղը, պատվիրատուի կողմից չծանուցվելը դիտարկել է որպես հայտի մերժում:

«Վանյան և Հովսեփյան» ՍՊԸ-ի համար, որպես փոքր ձեռնարկություն, կենսական նշանակություն ունի պետական գնումների գործընթացին մասնակցելու իրավունքի պահպանումը»:

«Վանյան և Հովսեփյան» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/166 ընթացակարգի շրջանակներում 25.06.2021թ. ժամը 09:33-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնացությունը:

3. <u>«Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամը, ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 14.06.2021թ. թիվ Ե/ՎՈՒ/1068-21 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Հայտնում ենք, որ 2021թ.-ի հունիսի 3-ին, ՀՀ, ք. Երևան, Տերյան 74 հասցեում գտնվող «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի շենքում ժամը 13:00-ին տեղի է ունեցել ընդհանուր շինարարական աշխատանքների ձեռքբերման ՀԱԱՀ-ԳՀԱՇՁԲ-21/69 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի բացման և գնահատման նիստը:

«Վանյան և Հովսեփյան» ՍՊԸ-ի (ՀՎՀՀ՝ 06944032, հասցե՝ ՀՀ, ք. Վանաձոր, Ռուսթավի 7/12, հեռ.՝ +374 98 896575, էլ. փոստի հասցե՝ qristine.hovsepyan@yandex.ru) կողմից հայտով ներկայացված փաստաթղթերի գնահատման արդյունքում գնահատող հանձնաժողովի կողմից հրավերի պահանջների նկատմամբ արձանագրվել են անհամապատասխանություններ, մասնավորապես՝ գնման ընթացակարգին մասնակցելու դիմում-հայտարարության փաստաթուղթը՝ Հավելված 1-ը, թերի է՝ բացակայում է հրավերով պահանջվող մասնակցին սպասարկող բանկի և բանկային հաշվեհամարի վերաբերյալ տեղեկատվությունը, միաժամանակ՝ հայտում բացակայում է ընթացակարգի հրավերով պահանջվող ծավալաթերթ-նախահաշիվի փաստաթուղթը:

Գնահատող հանձնաժողովը որոշեց նիստը կասեցնել մեկ աշխատանքային օրով և 08.06.2021թ.-ին համակարգի միջոցով՝ ծանուցմամբ «Վանյան և Հովսեփյան» ՍՊԸ-ին առաջարկել մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված

անհամապատասխանությունները՝ հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի (այսուհետ՝ Կարգ) 41-րդ կետով սահմանված պահանջները:

Գնահատող հանձնաժողովը արձանագրել է, որ «Վանյան և Հովսեփյան» ՍՊԸ-ի կողմից 09.04.2021թ.-ին գնման ընթացակարգի հրավերում նշված էլեկտրոնային հասցեին շտկված փաստաթուղթ չի ներկայացվել:

Վերոգրյալով պայմանավորված՝ գնահատող հանձնաժողովը որոշեց «Վանյան և Հովսեփյան» ՍՊԸ-ի հայտը գնահատել անբավարար և մերժել՝ հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի 6-րդ ենթակետի «ա» պարբերությամբ սահմանված պահանջները:

Համաձայն Կարգի 45-րդ կետով սահմանված պահանջների՝ «Վանյան և Հովսեփյան» ՍՊԸ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում ենք Ձեզ՝ վերջինիս գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ սկսելու նպատակով:

Միաժամանակ հայտնում ենք, որ սույն գնման ընթացակարգի շրջանակներում ձեռք բերվող գնման առարկաները ներառված են հաստատված գնումների պլանում»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/166 ընթացակարգի շրջանակներում 25.06.2021թ. ժամը 09:33-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2021/166 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2021/166 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի կողմից իր կարիքների համար ընդհանուր շինարարական աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀԱԱՀ-ԳՀԱՇՁԲ-21/69» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Վանյան և Հովսեփյան» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի թիվ 2 արձանագրության համաձայն՝ 08.06.2021թ. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը՝ գնահատելով հայտում

պահանջվող փաստաթղթերի առկայությունը և դրանց կազմման համապատասխանությունը հրավերով սահմանված վավերապայմաններին և արձանագրել է, որ.

- «Վանյան և Հովսեփյան» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ընթացակարգին մասնակցելու դիմում-հայտարարության փաստաթուղթը, համաձայն՝ Հավելված 1-ի, թերի է, մասնավորապես՝ բացակայում է ՀԱԱՀ-ԳՀԱՇՁԲ-21/69 ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով պահանջվող մասնակցին սպասարկող բանկի և բանկային հաշվեհամարի վերաբերյալ տեղեկատվությունը:
- հայտում բացակայում է ՀԱԱՀ-ԳՀԱՇՁԲ-21/69 ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով պահանջվող ծավալաթերթ-նախահաշվի փաստաթուղթը:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը նույն արձանագրությամբ որոշում է կայացրել նիստը մեկ աշխատանքային օրով կասեցնելու վերաբերյալ՝ Ընկերությանը առաջարկելով ծանուցումը ստանալուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունները:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը Armeps էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով 08.06.2021թ. ծանուցել է Ընկերությանը՝ արձանագրված անհամապատասխանությունները շտկելու վերաբերյալ:

5.Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 10.06.2021թ. նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ «Վանյան և Հովսեփյան» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում չեն ներկայացվել արձանագրված թերությունների շտկված տարբերակները և որոշում կայացրել վերջինիս հայտն անբավարար գնահատելու և մերժելու վերաբերյալ:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 21.06.2021թ. թիվ 26/26-1/10031-2021 գրությունը, «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի 14.06.2021թ. թիվ Ե/ՎՈՒ/1068-21 գրությունը՝ կից փաստաթղթերով, «Վանյան և Հովսեփյան» ՍՊԸ-ի գրությունը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ ***գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից*** պայմանագրի միակողմանի լուծմանը ***կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,***

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ***հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:***

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 32-րդ կետի 3-րդ ենթակետի ա) պարբերության համաձայն՝ ***<u>հրավերով նախատեսվում է նաև, որ շինարարական ծրագրերի գնման դեպքում մասնակիցը ներկայացնում է նաև իր կողմից հաստատված՝ լրացված ծավալաթերթ-նախահաշիվ</u>՝*** հաշվի առնելով հրավերին կցված ծավալաթերթով ըստ աշխատանքների նախահաշվային բաժինների համար

սահմանված առավելագույն կշիռները: Ընդ որում՝ կշիռները կիրառվում են մասնակցի առաջարկած ընդհանուր գնային առաջարկի նկատմամբ, նկատի ունենալով, որ շեղումը չի կարող ավել կամ պակաս լինել հրավերին կցված ծավալաթերթով տվյալ բաժնի համար սահմանված կշռի չափի տասը տոկոսից:

Նույն կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 4-րդ կետի 4.4-րդ ենթակետի համաձայն՝ ***մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված՝ լրացված ծավալաթերթ-նախահաշիվ***, հաշվի առնելով սույն հրավերին կցված ծավալաթերթով ըստ աշխատանքների նախահաշվային բաժինների համար սահմանված առավելագույն կշիռները: Ընդ որում կշիռները կիրառվում են մասնակցի կողմից ներկայացված գնային առաջարկի նկատմամբ, նկատի ունենալով, որ շեղումը չի կարող ավել կամ պակաս լինել սույն հրավերին կցված ծավալաթերթով տվյալ բաժնի համար սահմանված կշռի չափի տաս տոկոսից...:

Այսպես, «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի կողմից իր կարիքների համար ընդհանուր շինարարական աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀԱԱՀ-ԳՀԱՇՁԲ-21/69» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Վանյան և Հովսեփյան» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի թիվ 2 արձանագրության համաձայն՝ 08.06.2021թ. ***Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը***՝ գնահատելով հայտում պահանջվող փաստաթղթերի առկայությունը և դրանց կազմման համապատասխանությունը հրավերով սահմանված վավերապայմաններին և ***արձանագրել է, որ.***

- ***«Վանյան և Հովսեփյան» ՍՊԸ-ի*** կողմից ներկայացված ընթացակարգին մասնակցելու դիմում-հայտարարության փաստաթուղթը, համաձայն՝ Հավելված 1-ի, թերի է, մասնավորապես՝ բացակայում է ՀԱԱՀ-ԳՀԱՇՁԲ-21/69 ծածկագրով գնման

ընթացակարգի հրավերով պահանջվող մասնակցին սպասարկող բանկի և բանկային հաշվեհամարի վերաբերյալ տեղեկատվությունը:

- ***<u>հայտում բացակայում է ՀԱԱՀ-ԳՀԱՇՁԲ-21/69 ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով պահանջվող ծավալաթերթ-նախահաշվի փաստաթուղթը:</u>***

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը նույն արձանագրությամբ որոշում է կայացրել նիստը մեկ աշխատանքային օրով կասեցնելու վերաբերյալ՝ Ընկերությանը առաջարկելով ծանուցումը ստանալուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունները:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը Armeps էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով <u>08.06.2021թ. ծանուցել է Ընկերությանը՝ արձանագրված անհամապատասխանությունները շտկելու վերաբերյալ:</u>

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 10.06.2021թ. նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ ***Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ «Վանյան և Հովսեփյան» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում չեն ներկայացվել արձանագրված թերությունների շտկված տարբերակները և որոշում կայացրել վերջինիս հայտն անբավարար գնահատելու և մերժելու վերաբերյալ:***

Կարգի 41-րդ կետով սահմանվում է, որ ***եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում <u>արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ,</u> ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով <u>ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:</u>***

Ընդ որում Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: ***<u>Հակառակ դեպքում տվյալ</u>*** մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:

Այսպիսով՝ արձանագրում եմ, որ Ընկերությունը Կարգի 41-րդ կետի համաձայն ծանուցվել է հայտում առկա անհամապատասխանությունը շտկելու վերաբերյալ, սակայն սահմանված ժամկետում չի շտկել, այն է՝ չի ներկայացրել Կարգի 32-րդ կետի 3-րդ ենթակետի ա) պարբերությամբ և Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 4-րդ կետի 4.4-րդ ենթակետով պահանջվող իր կողմից հաստատված՝ լրացված ծավալաթերթ-նախահաշիվը,

որը հանգեցրել է Ընթացակարգին Ընկերության հետագա մասնակցության դադարեցմանը:

Կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետով սահմանվում է, որ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ ***մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը*** կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ***ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:***

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա) պարբերության համաձայն՝ ***մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:***

Այսպիսով՝ գործով առկա նյութերը համադրելով կիրառման ենթակա նորմերի հետ, գտնում եմ, որ «Վանյան և Հովսեփյան» ՍՊԸ-ն ՀԱԱՀ-ԳՀԱՇՁԲ-21/69» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում թույլ է տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված խախտում, ուստի առկա են Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:

Օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը որոշում է կայացնում մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին:

Նույն օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ անձը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 21.06.2021թ. թիվ 26/26-1/10031-2021 գրությամբ «Վանյան և Հովսեփյան» ՍՊԸ-ին գնումների գործընթացին

մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և «Վանյան և Հովսեփյան» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**